Ո Ր Ո Շ Մ Ա Ն Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխադրելու մասին
(Զեկ. Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 26.10.2018թ. N 140 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.2359 հա վարելահողը /կադաստրային ծածկագիր՝ 06-060-0210-0033/ փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 140

ք. Երևան **26.10.2018թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/202-18, ՀՀ բնապահպանության 3/02.2/30004-18, ՀՀ գյուղատնտեսության ԱՀ/ԱԲ-2/331-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/235-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/273-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/16276-18 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11/222-18, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/174-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ալավերդի համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.2359 հա վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 06-060-0210-0033) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ 0210-0033 ԾԱԾԿԱԳՐԻՑ
2359 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆՊԱՏԱԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000



▨ — ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ, ՆԱՀԱՐՅԱՆ